ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

https://doi.org/10.59982/18294359-26.1-vv-10

Աշոտ Հայկի Խաչատրյան
ի.գ.դ., պրոֆեսոր
ՀԵՀ, Հանրային և միջազգային իրավունքի ամբիոն
a.khachatryan@inbox.ru

Մերի Գևորգի Համբարձումյան
Հայցորդ
ՀԵՀ, Հանրային և միջազգային իրավունքի ամբիոն
meri.g.hambardzumyan@gmail.com

Ամփոփագիր

Վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետության ուսումնասիրությունն անհրաժեշտ է կատարել իրավական պետության սահմանադրաիրավական հայեցակարգի համատեքստում: Այդ նպատակով պետք է վերլուծել վարչաիրավական վեճերի լուծման համակարգի սահմանադրաիրավական հիմքերը: Պետք է պարզել, թե ի՞նչ չափանիշներով կարելի է գնահատել այդ համակարգի արդյունավետությունը՝ հաշվի առնելով նաև մարդու իրավունքների պաշտպանության և հանրային շահի ապահովման պահանջները, ուսումնասիրել վարչաիրավական վեճերի լուծման դատական և արտադատական ընթացակարգերը, դրանց արդյունավետության վրա ազդող իրավական և ինստիտուցիոնալ գործոնները:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետությունը հանդիսանում է իրավական պետության կարևոր գործառնական բաղադրիչ, և այն պայմանավորված է ինչպես նորմատիվ կարգավորման մակարդակով, այնպես էլ վարչական մարմինների ինստիտուցիոնալ կարողություններով, իրավական մշակույթի և հանրային վստահության մակարդակով: Ընդ որում՝ արդյունավետության գնահատման հարցում կարևորվում է ոչ միայն ընթացակարգային արագությունը, այլ նաև անձանց իրավունքների իրական պաշտպանության և հանրային շահի ապահովման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետության գնահատման հարցում համալիր մոտեցման անհրաժեշտությունը՝ ներառելով իրավական, ինստիտուցիոնալ և սոցիալական չափանիշները: Հետազոտության արդյունքում առաջարկվել են վարչաիրավական վեճերի լուծման համակարգի

կատարելագործման այնպիսի ուղղություններ, որոնք ուղղված են արտադատական մեխանիզմների զարգացմանը, ընթացակարգերի պարզեցմանը և արդյունավետության գնահատման միասնական չափանիշների ձևավորմանը:

Հիմնաբառեր. վարչաիրավական վեճեր, արդյունավետություն, վարչաիրավական վեճերի լուծում, իրավական պետություն, մարդու իրավունքներ, պաշտպանություն:

Ներածություն

Քանի որ հանրային կառավարման ոլորտը ենթադրում է իշխանական-ենթակայական հարաբերությունների առկայություն, ուստի այն նաև ստեղծում է իրավական հակասությունների առաջացման օբյեկտիվ հիմքեր: Այդ պատճառով վարչաիրավական վեճը պետք է դիտարկել ոչ թե որպես բացառիկ երևույթ, այլ որպես հանրային կառավարման համակարգին ներհատուկ և օրինաչափ դրսևորում:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական գործընթացների համատեքստում հանրային իշխանության և անհատի փոխգործակցության ոլորտում տեղի են ունեցել խորքային փոփոխություններ, որոնց մի մասն առնչվում է իրավական պետությունը բնութագրող այնպիսի հատկանիշների արդյունավետ իրացման հետ, ինչպիսիք են՝ իրավունքի գերակայությունը, օրինականությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորումը, իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, դատական իշխանության անկախությունը, պետության ու անձի փոխադարձ պատասխանատվությունը և այլն:

Այս առումով հանրային կառավարման արդի նորմատիվ վերակառուցումը ի հայտ է բերում վարչական վեճերի լուծման՝ ինչպես իրավական, այնպես էլ՝ սոցիալական համագործակցության տարբեր ձևերի ու ուղղությունների մշակման անհրաժեշտություն: Հիշյալ հանգամանքով պայմանավորված՝ առանձնակի կարևորություն է տրվում վարչաիրավական վեճերի լուծման մեխանիզմների զարգացմանը:

Իրավական պետության հիմքում ընկած են իրավունքի գերակայությունն ու օրինականությունը, որոնք ուրվագծում են հանրային իշխանության գործողությունների այն շրջանակը, որտեղ վերջինիս պարտականությունն է ոչ միայն գործել օրենքի հիման վրա և դրա սահմաններում [Սահմանադրություն, հոդվ. 6], այլև հարգել և պաշտպանել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու պարտականությունները [Սահմանադրություն, հոդվ. 2, մաս 2], սահմանափակված լինել այդ իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք [Սահմանադրություն, հոդվ. 2, մաս 3]:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ իրավական պետության հռչակումն ինքնին մեկնաբանվում է, նախ և առաջ, որպես սահմանադրական պետություն, որը հանդիսանում է իրավական պետության գաղափարի

գործնական մարմնավորումը [Догадайло, 69-73]: Սահմանադրությունն իրավական պետության իրավական համակարգի կենտրոնն է, որի հիման վրա ձևավորվում է օրինականությունը և զարգանում է ամբողջ օրենսդրական համակարգը՝ ընդգրկելով հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Պարզ է, որ իրավական պետությունում պատասխանատվությունը չի կարող միակողմանի լինել, և պետության ու քաղաքացիների փոխհարաբերությունները պետք է կառուցվեն այնպես, որ պետությունը, նրա մարմինները և պաշտոնատար անձինք ծառայեն քաղաքացիներին: Եվ այս տեսանկյունից իրավական պետությունը հանդես է գալիս որպես մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրացման գործիք: Այստեղ առաջնային է անձը՝ իր իրավունքներով, իսկ պետական մարմինների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ այդ իրավունքները ոչ միայն ձևականորեն ճանաչվեն, այլ նաև գործնականում իրականացվեն: Ընդ որում, պետք է նշել, որ իրավական պետությունը ենթադրում է մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի ապահովման տարբեր միջոցների կիրառություն, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում վարչաիրավական վեճերի լուծման ընթացակարգերը, որոնք կարող են իրականացվել ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով: Միաժամանակ, նկատի ունենալով այն, որ մարդը Սահմանադրությամբ հռչակվում է որպես բարձրագույն արժեք [Սահմանադրություն, հոդվ. 3, մաս 1], ուստի պետության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչմամբ ու երաշխավորվմամբ է պայմանավորվում հանրային իշխանության գործունեության բովանդակությունն ու ուղղվածությունը: Նշված նորմն ունի ոչ միայն հռչակագրային, այլև ուղղորդող և սահմանափակող նշանակություն՝ ձևավորելով հանրային մարմինների գործունեության սահմանադրաիրավական շրջանակը:

Այս համատեքստում պետական մարմինները ապահովում են մարդու իրավունքների պաշտպանությունը, և նրանց գործունեությունը պետք է լինի օրինական, համաչափ և հիմնավորված: Այս չափանիշներով էլ գնահատվում և վերահսկվում է վարչական մարմինների գործունեությունը:

Ինչ վերաբերում է Սահմանադրության 50-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված մարդու և քաղաքացու դատական պաշտպանության և պատշաճ վարչարարության իրավունքների արդյունավետ իրացման հիմնախնդրին, ապա անհրաժեշտ է նկատել, որ հետազոտության առարկա հիմնահարցի շրջանակում դրանք բովանդակում են այդ իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ այնպիսի մեխանիզմներ, որոնք, մասնավորապես, լրացվում են վարչական օրենսդրությամբ նախատեսված արտադատական ընթացակարգերով:

Վարչաիրավական վեճերի լուծման համակարգը և արդյունավետությունը

Վարչաիրավական վեճը, լինելով իրավունքի վերաբերյալ վեճ, ենթադրում է դրա լուծման մի քանի հիմնական եղանակների առկայություն: Դրանց շարքում առանցքային տեղ առաջին

հերթին զբաղեցնում է այդ վեճերի էության, իրավական բովանդակության ու կառուցվածքի բացահայտումը, ինչը հետագայում հնարավորություն է տալիս դրանց վարչական կամ դատական կարգով լուծումը:

Ընդ որում, այդ վեճերի լուծման արդյունավետության տեսական հիմքերը բացահայտելու համար կարևոր է իրավական նորմերի արդյունավետության ընդհանուր հայեցակարգի սահմանումը: Այս առումով արդարացի են այն պնդումները, որ իրավական նորմի արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ միայն դրա ձևական կիրառմամբ, այլև արդյունքով՝ թե որքանով է այն ապահովում իր առջև դրված սոցիալական և իրավական նպատակների իրականացումը [Самощенко, Никитинский, 39-40]:

Հիշյալ դիրքորոշումը, կարծում ենք, կիրառելի է նաև վարչաիրավական վեճերի լուծման ոլորտում, որտեղ արդյունավետությունը որոշվում է ոչ միայն համապատասխան ընթացակարգերի առկայությամբ, այլև դրանց գործնական արդյունքով՝ մասնավորապես անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովմամբ:

Ընդ որում, եթե վարչական արդարադատությունը որպես ժամանակակից իրավական պետության անբաժանելի հատկանիշ [Старилов, 53], միաժամանակ, հանրային իշխանության գործունեության նկատմամբ իրավական հսկողության միջոց, ապահովում է վարչարարության իրավաչափությունը, սահմանափակում իշխանության կամայականությունը և նպաստում իրավունքի գերակայության երաշխավորմանը, ապա արտադատական (վարչական) ընթացակարգերը նույն նպատակներին ծառայում են վարչական համակարգի ներսում՝ վարչարարությունը կարգավորող օրենսդրության հիման վրա [«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»], [ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք]:

Միաժամանակ, կարելի է արձանագրել, որ Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետությունը հռչակելով իրավական պետություն, ընդհանուր առմամբ սահմանում է նաև վարչաիրավական վեճերի արտադատական լուծման իրավական հիմքերը:

Միաժամանակ առկա մոտեցումների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավական պետության հայեցակարգը ենթադրում է ոչ միայն այդ հիմքերի նորմատիվ ամրագրում, այլև վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետ և լիարժեք մեխանիզմների ձևավորում՝ արտադատական միջոցների կիրառմամբ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնելով մասնավոր շահերի պաշտպանություն, միաժամանակ ապահովում են դրանց համապատասխանությունը հանրային շահին, իսկ վարչաիրավական նորմերը ծառայում են այդ հարաբերությունների նպատակային և օրինական կարգավորմանը: Արտադատական (վարչական) կարգով լուծման ենթակա վարչաիրավական վեճում որպես հիմնական սուբյեկտ հանդես է գալիս պետությունը՝ իր մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ վարչաիրավական վեճի լուծումն իրականացվում է կողմերի վարքագծի իրավական կարգավորման միջոցով՝ արգելքներ և պարտականություններ

սահմանելով և դրանց պարտադիր կատարումն ապահովելով, որի շնորհիվ նրանց վարքագիծը համապատասխանեցվում է հանրային շահին:

Վերոգրյալից հետևում է, որ վարչաիրավական վեճի արդյունավետ լուծման գործընթացում թույլատրելի են անձի իրավունքների և ազատությունների այն սահմանափակումները, որոնք ունեն օրինական բնույթ, իսկ դրանց խախտումը հանգեցնում է իրավահարաբերությունների խեղաթյուրմանը, ինչը հասարակության համար առաջացնում է բացասական հետևանքներ:

Վարչաիրավական վեճի արդյունավետ լուծումը կախված է իրավունքների սահմանափակումների հիմնավորվածությունից և դրանց համաչափությունից՝ ապահովելով հասարակության և անձի շահերի հավասարակշռությունը: Սահմանադրության համաձայն՝ նման սահմանափակումները թույլատրելի են միայն օրենքով և անհրաժեշտության դեպքում: Հետևաբար, Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանները, որոնք պայմանավորված են հանրային շահի պահանջներով, հնարավորություն են տալիս ձևավորել հանրային և մասնավոր շահերի միջև հավասարակշռություն՝ սահմանելով դրանց փոխհարաբերությունների իրավական շրջանակը:

Հասարակական հարաբերությունների արագընթաց և շարունակական զարգացման պայմաններում վարչաիրավական ընթացակարգերի արդյունավետության գնահատումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Դրանց իրավական և կազմակերպական բաղադրիչների համակցված վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն կիրառման ընթացիկ խնդիրները, այլև դրանց կատարելագործման ուղղությունները՝ հաշվի առնելով հանրային կառավարման առաջ կանգնած նոր պահանջները:

Հարկ է նկատել, որ «արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը» ենթադրում է այնպիսի ընթացակարգերի առկայություն, որոնք իրականում կարող են վերականգնել խախտված իրավունքը: Այս դրույթն ուղղակիորեն վերաբերում է վարչաիրավական վեճերի ինչպես դատական, այնպես էլ արտադատական լուծման կառուցակարգերին:

Ներկայացված վերլուծությունը վկայում է, որ վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե որքանով են ստացված արդյունքները համապատասխանում սահմանված նպատակներին:

Գնահատման գործընթացը միաժամանակ բացահայտում է վեճի լուծման ընթացքում առկա սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների փոխազդեցությունն ու դրանց միջև առաջացող հակասությունները: Նման հակասություններն անխուսափելի են, քանի որ հնարավոր չէ ամբողջությամբ հաշվի առնել հասարակության բոլոր շահերը և կանխատեսել փոփոխվող սոցիալական միջավայրի ազդեցությունը:

Վեճի լուծման արդյունքների համապատասխանությունը համակարգի նպատակներին, արժեքներին և հասարակական պահանջներին ապահովվում է վարչաիրավական վեճերի լուծման ամբողջ համակարգի արդյունավետ կազմակերպման և կիրառվող մեթոդների ճիշտ ընտրության միջոցով:

Միաժամանակ, վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետության գնահատման ընթացակարգը պետք է տարբերակել վերահսկողությունից: Եթե վերահսկողությունն ուղղված է վարչական մարմինների գործունեության օրինականության ստուգմանը, ապա արդյունավետության գնահատումը նպատակ ունի բացահայտելու գործունեության արդյունքների համապատասխանությունը նախանշված նպատակներին և գնահատելու դրանց իրագործման աստիճանը: Այս համատեքստում հիմնական չափանիշը հանդիսանում է այն, թե որքանով է ընդունված որոշումը համապատասխանում այն պետական մարմնի գործառույթներին և նպատակներին, որը լիազորված է լուծելու վարչաիրավական վեճերը, ինչպես նաև հանրային և մասնավոր շահերին, դրանց իրացման հնարավորություններին և օբյեկտիվ պահանջներին:

Վարչաիրավական վեճերի լուծման ընթացակարգը արդյունավետ է այն դեպքում, երբ այն ապահովում է կողմերի մասնակցության իրական հնարավորություններ և նպաստում է օրինականության պահպանմանը: Այդ արդյունավետությունը պայմանավորված է վարչական մարմինների համակարգված գործունեությամբ և հանրային շահի իրավաչափ իրացման ապահովմամբ:

Մեր կարծիքով, վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետության չափանիշների սահմանման հիմքում պետք է դրվեն հետևյալ իրավական գործոնները՝ վարչական նորմերի արդյունավետության աստիճանի գնահատում, վարչական նորմերի իրացման միջոցով իրականացվող պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների իրավակիրառ գործունեության արդյունավետության որոշում, ինչպես նաև վեճի լուծման գործընթացի մասնակիցների գործունեության օրինականության ապահովում: Սահմանադրության կարգավորումների բովանդակությունից բխում է մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի պահանջների երաշխավորում, ինչպիսիք են՝ ա) միջազգային իրավունքի նորմերն ունեն կիրառման առաջնահերթություն, եթե այդ նորմերի և օրենքների նորմերի միջև առկա է հակասություն [Սահմանադրություն, հոդվ. 5, մաս 3], բ) յուրաքանչյուր ոք իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով կարող է դիմել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ [Սահմանադրություն, հոդվ. 61, մաս 2], գ) մարդու իրավունքների սահմանափակումները, այդ թվում՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, չեն կարող դուրս գալ միջազգային պարտավորությունների շրջանակներից կամ գերազանցել միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները [Սահմանադրություն, հոդվ. 76, հոդվ. 81, մաս 2] և այլն:

Կատարելագործման ուղղությունները

Վարչաիրավական վեճերի լուծման մեխանիզմների արդյունավետության բարձրացման համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում առաջադեմ արտասահմանյան

փորձի վերլուծությունն ու ներդրումը Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգ: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նման փոխառությունները չեն կարող կրել մեխանիկական բնույթ, այլ պետք է կատարվեն՝ հաշվի առնելով ներպետական իրավական համակարգի սկզբունքները, սահմանադրական արժեքները և վարչարարության կազմակերպման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները:

Կարծում ենք, որ վարչաիրավական վեճերի լուծման արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ընթացակարգերի արագության կամ գործերի քանակական ցուցանիշների տեսանկյունից, այլ նաև՝ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության, վարչական մարմինների գործունեության օրինականության ապահովման և հանրային իշխանության նկատմամբ վստահության բարձրացման համատեքստում: Այս առումով վարչաիրավական վեճերի լուծման մեխանիզմների արդյունավետության գնահատման չափանիշները պետք է ներառեն ինչպես իրավական, այնպես էլ ինստիտուցիոնալ և սոցիալական բաղադրիչներ:

Կատարված վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ վարչաիրավական վեճերի լուծման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է զարգացնել արտադատական ընթացակարգերը՝ ապահովելով դրանց մատչելիությունն ու արդյունավետությունը: Միաժամանակ կարևոր է վարչական մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտական պատրաստվածության բարձրացումը, ինչպես նաև պարզեցված ընթացակարգերի ներդրումը: Ընդ որում, առանձնահատուկ նշանակություն ունի միջազգային իրավական փորձի կիրառումը և արդյունավետության գնահատման միասնական չափանիշների ձևավորումը, որոնք կներառեն իրավական, ինստիտուցիոնալ և սոցիալական բաղադրիչներ:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել հետևյալը.

1) հանրային իրավունքի համակարգում վարչաիրավական վեճը պետք է դիտարկել որպես իրավական պետության կարևորագույն կառուցակարգային և գործառութային տարր, քանի որ դրա առկայությունն ու լուծման արդյունավետ մեխանիզմների գոյությունը հնարավորություն են տալիս ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը և հանրային իշխանության գործունեության իրավաչափության վերահսկողությունը, իսկ վարչաիրավական վեճերի լուծման և կարգավորման մեխանիզմների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն իրավական կարգավորման որակով, այլև վարչական մարմինների ինստիտուցիոնալ կարողություններով, իրավական մշակույթի մակարդակով, հանրային վստահությամբ և իրավակիրառ պրակտիկայի կայուն ու կանխատեսելի բնույթով,

2) վարչաիրավական վեճերի լուծման համակարգի կատարելագործումը, կարծում ենք, պետք է իրականացվի համալիր և համակարգային մոտեցմամբ՝ ներառելով տեսական հիմքերի

հստակեցումը, օրենսդրական կարգավորման շարունակական զարգացումը, ինչպես նաև արդյունավետ, մատչելի և համաչափ գործնական մեխանիզմների ներդրումը, որոնց համատեքստում և առանձնահատուկ նշանակություն է ստանում վարչաիրավական վեճերի լուծման գործընթացում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովումը, իրավական որոշումների հիմնավորվածության և համաչափության բարձրացումը, ինչպես նաև արդյունավետության գնահատման միասնական և գիտականորեն հիմնավորված չափանիշների ձևավորումը:

Գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 201.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, https://www.arlis.am/hy/acts/102510, 27.03.2026թ.,
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413, հոդվ. 69, https://www.arlis.am/hy/acts/220987, 27.03.2026թ.,
3. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 05.12.2013թ., ՀՀՊՏ 2013.12.28/73(1013). 1, Հոդ. 1186.1, https://www.arlis.am/hy/acts/224138, 27.03.2026.
4. Догадайло Е. Ю. Конституционное право Российской Федерации : учебник для студентов, обучающихся по направлению подготовки «Юриспруденция» (квалификация «бакалавр») / отв. ред. С. И. Носов. – М.: Статут, 2014. – 391 с.,
5. Самощенко И. С., Никитинский В. Н. Некоторые проблемы методологии изучения эффективности правовых норм // Проблемы социологии права. – Вильнюс, 1970. – Вып. 1. – 244 с.,
6. Старилов Ю. Н. Административная юстиция. Теория, история, перспективы. – М.: НОРМА; ИНФРА-М, 2001. – 304 с.

FUNDAMENTAL ISSUES OF ADMINISTRATIVE LAW DISPUTES WITHIN THE CONTEXT OF THE RULE-OF-LAW STATE: CONSTITUTIONAL JURISPRUDENCE APPROACHES

Ashot Khachatryan

Doctor of Law, Professor

EUA, Chair of Public and International Law

a.khachatryan@inbox.ru

Meri Hambardzumyan
Researcher
EUA, Chair of Public and International Law
Meri.g.hambardzumyan@gmail.com

Abstract

The study of the effectiveness of resolving administrative law disputes must be conducted within the context of the constitutional-legal framework of a rule-of-law stateFor this purpose, it is necessary to analyze the constitutional and legal foundations of the system of administrative dispute resolution. It is also necessary to determine the criteria by which the effectiveness of this system can be assessed, taking into account the requirements of the protection of human rights and the safeguarding of the public interest, as well as to examine the judicial and extrajudicial procedures for resolving administrative disputes and the legal and institutional factors influencing their effectiveness.

The findings of the conducted studies demonstrate that the effectiveness of administrative law dispute resolution serves as a vital functional component of a rule-of-law state. It is contingent upon both the level of normative regulation and the institutional capacities of administrative bodies, as well as the level of legal culture and public trust. Furthermore, in evaluating effectiveness, emphasis is placed not only on procedural speed, but also on the necessity of ensuring the actual protection of individual rights and the public interest.

As a result of the study, the necessity of a comprehensive approach to assessing the effectiveness of administrative dispute resolution has been substantiated, incorporating legal, institutional, and social criteria. Consequently, recommendations have been proposed to improve the administrative law dispute resolution system, focusing on the development of out-of-court mechanisms, the simplification of procedures, and the formulation of unified criteria for effectiveness assessment.

***Keywords**:* Administrative disputes, effectiveness, administrative dispute resolution, rule of law, human rights, protection.

Ներկայացվել է՝ 23.04.2026թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 27.04.2026թ.